ԱՐԱՐԱՏ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՓԱՂԱՓԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Տարեկան համար տարեշրջանը 5 ֆր. կամ 2 բել. ոս. թղթդրմ.

Աբրիլ ամեն տեղի համար ուր այս լրագրի մուտքը արդիլուած չէ, ամբողջ 10րդ շրջանի (94 օգոստ.—95 մայիս) բաժնորդագինն է 20 ֆր. կանխիկ։ Կարելի է նաեւ բաժնորդագրուիլ քանի ամսի համար ալ որ ուզուի, ամեն մէկ ամսականը 2½ ֆր. Հաշուելով և 1895 մայիս ամսէն անդին չանցնելու պայմանով։

Նամակ և ծրար պէտք է ղրկել հեռեալ հասցէով. M. PORTOUKALIAN, rédacteur du journal *Arménia*. MARSEILLE (France)

Ա ՏԱՐԻ ԹԻՒ 28

1894 ՆՈՅԵՄԲԵՐ 3

ՀՈԿՏԵՄԲԵՐ 22 (Հ. Տ.)

ՇԱԲԱԹ

Աղհրատարակուի Դշ. ևՇբթ. օրեր

ՊԱՏՄԱՆԵՆԵՐ

Խմբագրութիւնը, եթէ հարկ համարի, համառօտելով և կամ մասամբ միայն կը հրատարակէ իրեն ղրկուած գրութիւնները։ Պարտաւոր չէ վերադարձունել չհրատարակուած ձեռագիրները։ Յանուցումներ կընդունուին հայերէն և ֆրանսերէն լեզուով։ Յանուցման 1 միլիակ գիրը 1 սանտիմ կարժէ. 1 գլխագիրը 2 սանտիմ։

Les annonces en français et en arménien, sont reçues aux bureaux de la Rédaction (Allées de Meilhan, 44.)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Վեհ. կաթողիկոսի կոնդակը Վառնայի Հայերի Հոգեւոր Հովուին. — Նամակ Պարսկաստանէն (Սալմաստ). — Մի ակնարկ Ս. Էջմիածնի միաբեայ կեանքին վրայ — Հայեր ի Թիւրքիա. — Զարին մահը. — Կ.պոլսի արուեստահանդէսը.— Հողագործներէն եւ գիւղագործների վիճակը Թիւրքիոյ մէջ.— Տեղեւագրեր.— Բանասիրական (Հայ գիւղացին)։

ՎԵՀ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՎԱՌՆԱՅԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎՈՒԻՆ

ՄԿՐՏԻՉ ԾԱՌԱՑ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ և անհատանելի կամօքն Աստուծոյ և պիսկոպոսապետ և կաթողիկոս ամենայն Հայոց, Ծայրագոյն Պատրիարք համազգական նախամեծար Ամենայ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւ յ Սրբոյ կաթողիկէ Էջմիածնի, Արժանապատիւ Ծովհան քահանայի Մանդակունւոյ, արժանաւոր Հովուի Հայոց վառնա քաղաքի, հարազատ որդւոյ Մայր Աթոռոյս ողջոյն և հայրապետական օրհնութիւն։

Ի հաստատս գոհունակութեան մերոյ և համակրութեան առ քեզ սակս անխոնջ և արդիւնաւոր աշխատութեանց յատկապէսի Հոգեւոր կչման և պաշտամանդ ի սպասաւորութիւն Սրբոյ Եկեղեցւոյ Հայաստանեայց, պատուս Հայրապետական կոնդակաս շնորհեմք քեզ իրաւունս կրել ի կուրծս խաչ քահանայական ոսկեզօծ, առանց ձուլեալ Փրկչական պատկերի։

Եւ հաստատեմք զի վարձատրութիւնս այս լինիցի քեզ ի խրախոյս յարատեւել միշտ ի ջանս նոյնպիսիս յօգուտ Եկեղեցւոյ մերոյ Սրբոյ. պատուիրեմք միանգամայն քեզ, արթուն լինել և հսկել առ ուսուցանել Հայգն մանկտւոյն զմայրենի լեզու մեր և զդիւթութիւն Հայաստանեայց կրօնի և խորհիլ և գործել հանապազ զօգուտան Աղգի մերոյ և Եկեղեցւոյ, որով արժանի լինիցիս ընդունել և զպատկն արդարութեան ի հանդերձելոցն։

Ողջ լեր և օրհնեալ յերկնաւորէ Հօրէ մերմէ և ի Մշնջ. ամէն։

ՄԿՐՏԻՉ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ի 25 սեպտեմ. 1894

և ըստ տումարիս ՌՃԽԴ

Համար 1683

Ա.Բարատեան Մայրաթոռ Ս. Էջմիածնի ի վաղարշապատ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԷՆ

Սալմաստ, սեպտ. 26/8 հոկտ. 94

Երէկ, վարդագ Յոյի տօնը, Սալմաստի Հավթուան գիւղին մէջ մասնաւոր մի շքով տօնուեցաւ։ Վեհափառ Հայրիկի կաթողիկոսական օծման տարեդարձի հանդիսին հետ միացած էր և Սալմաստ գաւառի նորեկ առաջնորդական ներկայացուցիչ և վանահայր Հայր Աբրէն Վէհունի Երէցեանն առաջին հանդիսաւոր պատարագի մատուցման հանդէսը։

Այդ հանդիսաներէ առաջինին ընդհանուր կարեւորութիւնը ընդհանուրին ծանօթ լինելով, մեզի կը մնայ երկրորդին Սալմաստի նկատմամբ ունեցած մասնաւոր նշանակութիւնը բացատրելու համար մի քանի ծանօթութիւններ հաղորդել։

* * *

Այս առաջին անգամն է որ Սալմաստ հայաշատ և կարեւոր գաւառին մէջ մի առաջնորդական ներկայացուցիչ վարդապետ կը ղրկուի. Հայր Աբրէնի պաշտօնը իր պաշտօնագիրներուն մէջ նշանակուած է «Բարեկարգիչ — դործակալ», ինչպէս և «վանահայր Ջարեւանդ գաւառի Ս. Աստուածածնին վանքի» Հայր Աբրէնի պաշտօնի ծանրութիւնը բացատրելու համար, յիշել պէտք է որ Սալմաստի Հայերի եկեղեցական, վանական, գաւառական գործերի վերահասութիւնն իրեն յանձնուած է. և իրրեւ մի լքուած և Հայութեան մուխ անկիւն՝ այդ գաւառ Հայր Աբրէնի գործունէութեան և առաղին համար կը ներկայացնէ իր աւերակ սրբատեղինեը, իր անպրատդեա քահանայներ, անհաշիւ թողուած գիշեր կը վերցնէ և կը փախցնէ, և արտաքին մարդկանց սպառնալիքից կամ նախատինքից զերծ մնալու համար ակամայ մի թոյլ «Հայր մեր» է ասել տալիս քահանային և գործը գորանով վերջացնում։ Այսէն կողմից խղճալի է դարձել վիճակը. չունի եկեղեցի. եթէ ունենայ էլ մի կաւաշէն մերկ ու խոնաւ չտեմարանի նմանութիւն ունեցող եկեղեցի բաղդի բերմամբ, դրա էլ դռները տարին մի անգամ հազիւ բացուեն. սեւէ գպրոց և կանոնաւոր քահանայ չկայ։

Ծողովուրդը գտնուում է յետին աստիճանի չքաւորութեան մէջ. որը յաճախ առիթ է տալիս խեղճին թողնել մայրենի եկեղեցին և առանց սեւէ համոզման դիմել իսլամութեան։ Շատ քիչ չեն պատահում այդպիսի ցաւալի դէպքեր։

Անհոգ է գտնուում պատուելի վաճառականական կամ հարուստ դասակարդը իր օգնութեան ձեռքը այդպիսի տեղեր կարկառելու, ասելով թէ, ո՞վ գլուխ կը ցաւացնէ այդպիսի յետ ընկած տեղերի համար, ո՞ւմ հաւասը (դիւր) կըգայ այդպիսի խոր ընկած անկիւններ օգնութեան հասնելու. արդէն նրանք (յուսահատուած) Հայութիւնից զրկուել են և պիտի կորսուեն էլ։

Հա՞րկէ արդեօք միւս գաւառներն էլ մի առ մի նկարագրել. մինչդեռ նոքա աւելի վատթար դրութեան մէջ են գըտնուում. Ուրմիո՞յ գաւառը նկարագրեմ որը տգիտութեան մէջ տաղտապելուց, գրեթէ բոլորովին ընկած է մարդոցների ճիրաններին մէջ. Փայտակարա՞նը, որը երկար ժամանակ է հեծուէմ անագորոյն Զէլլալի ցեղերի իրաւասութեան ներքոյ. Սալմա՞սը, որտեղ, թէեւ գործի սկզբնատուրութիւններ լինում են, բայց այնքան դժուարութիւնների պատահում որ տակտին ամենայն աշխատութիւն անկատար է մնում։

Ծառն արմատով ի ծառ,
Տառն ճիմամբ ի տառ։

Գիւղացին է Հայերիս արմատը և բունը, նա է մեր ապագայ անկախութեան յոյսը և ապաւէնը։

Ա.Լ.Մ.Ս.Ս

ԱՐՏԱՔԻՆ ՀԱՐՑԵՐ

Ի՞նչ է ուզում ընդդիմությունը

Ընդդիմության ներկայացուցիչները ամեն առիթով ասում են, որ ուզում են ընտրություններին մասնակցել, բայց ոչ այնպես, ինչպես անցյալ տարի։ Ինչպե՞ս են ուզում մասնակցել։ Ի՞նչ պահանջներ ունեն։ Ի՞նչ են ուզում։

Ընդդիմության ներկայացուցիչները ասում են, որ ուզում են ընտրություններին մասնակցել

լեպ երթայ ստուգելու համար կաթողիկոսի առողջական վիճակը և եթէ բժշկական քննութեամբ հաստատուի թէ ա՛լ անկարող է գործելու, տեղեկագիր պատրիարքարան որ Տեղապահի ընտրութեան ձեռնարկուի. նաեւ հարկ եղածն ի գործ դնէ կաթողիկոսի դոյքերը պահպանելու համար։ Տ. Աբրահամ եպիսկոպոս սիտի այցելէ նաեւ Սիսի թեմերը իբրեւ Հոգեւոր Հովիւ։

Նոյն ժողովի որոշմանը համեմատ Ազգային վարչութիւնը հեռագրով նորէն տեղեկութիւններ ուզեր է Հալէպի պատուական վարչութենէն, կաթողիկոսի հիւանդութեան վիճակին վրայ։

— Պատրիարքական Տեղապահ Հմայեակ Սրբազան հոկտ. 12/24ին դարձեալ Եըլտըզի պալատն երթալով տեսակցեր է Սուլթանի Ա. քարտուղար Սիրէյա փաշային հետ։

ՋՍՐԻ ՄՍՀԸ

Այն աղէտը որ անխուսափելի համարուած էր բժիշկներէն, վերջապէս կատարուեցաւ։

Ռուսիոյ կայսրի հիւանդութիւնը կայսն վիճակ ունեցած էր վերջին օրերը. մինչեւ իսկ հանգստութեան նշանները սկսած էին երեւիլ, այնպէս որ դէթ մի ժամանակ եւս կեանքն երկարելու յոյսեր սկսան ծագիլ։ Բայց խաբուսիկ յոյսեր։

Չինդշաբթի օր օրհասական վերջին ճգնաժամն սկսաւ և օրապոյղ տագնապներէ վերջ, կէսօրէն յետոյ ժամ 2 3ի մէջտեղը Հոգին աւանդեց Ալեքսանդր Գ կայսրը Լիվատիայի մէջ։ Նոյն միջոցին Նիկոլայ Զարեւիչը իր հօր անկողնի քով ծնրադրած կեցած էր իր մօր Զարուհիին հետ. հոն կը գտնուէին, նոյնպէս ծնրադիր, Քսենիա մեծ դքսուհին և Ալիս իշխանուհին (նոր Զարի նշանածը), ինչպէս նաեւ վլատիմիր, Ալեքսիս, Սերգէյ և Պաւլի մեծ դուքսերը։ Ներկայ եղողները ոտքի ելնելով, Զարեւիչը Ռուսիոյ Զար հրատարակեցին, «կեցցէ Նիկոլա Բ Զարն» ըսելով։

Ալեքսանդր Բ Զարի մարմինը զմռսուելով Պետերբուրգ պիտի տարուի, այնտեղ Ս. Պօղոս և Պետրոս մայր եկեղեցիին մէջ թաղելու համար։ Հաւանական կը կարծուի որ թաղման հանդէսը կատարուի հոկտ. 29/10 Նոյեմբերին։

Գէորգ Մեծ դուքսը որ նոյնպէս Լիվատիա կը գտնուէր, հոգեւարքի տագնապին ժամանակ իր հօր անկողնին քով չէին տարած. բայց մեռնելէն յետոյ, իր մօր առաջնորդութեամբ գնաց համբուրել հօրը ձեռքը։ Ինչպէս յայտնի է, Գէորգ մեծ դուքսը արդէն հիւանդոտ է և հօր գիակին մօտ զգացած յուզումը աւելի վրդոված է զինք։

Բոլոր տէրութիւններն ալ ցաւակցական հեռագիրներ ղրկեցին Ռուսիոյ կայսերական ընտանիքին և կառավարութեան։

Ֆրանսայի նախարարապետը հրամայեց որ կառավարական շէնքերուն վրայ սուգի դրօշակ պարզեն։

Ալեքսանդր Բ ի մահը մեծ վիշտ պատճառած է ոչ միայն Ռուսիոյ, այլ և Եւրոպայի մէջ որի խաղաղութեան դրաւականներէ մին էր եղած իր հաշտասիրութեամբ և Ֆրանսայի հետ ունեցած կապակցութեամբը։ Շատ յուսալի է որ Նիկոլա Բ նոր Զարն ալ իր մեծանուն հօր քաղաքականութեանը հետեւի։

Կ. ՊՕԼՍԻ ԱՐՈՒԵՍՏՍՀԱՆԴԷՍԸ

Կ. պօլսեցի Փարիզի XIX Siècle լրագրին գրուած մի նամակէ կը քաղենք։

Ի՞նչ եղաւ Կ. պօլսի Արուեստահանդէսը (Exposition)։

Դեռ բացուիլը մտածուած չէ։

Այդ արուեստահանդէս բանալու գաղափարն ունեցան Թիւրքերը, Ֆիլիպէի արուեստահանդէսին նայելով։ Պալատին մէջ կասէին թէ երբ Պուլկարիայի պէս մի փոքրիկ ժողովուրդ Եւրոպային կը հրաւիրէ գալ իր իշխանութեան մէջ կատարուած յառաջդիմութիւնները տեսնելու, Թիւրքիան ինչո՞ւ չեր պիտի ընայ. իսկոյն Արուեստահանդէսի մի ծրագիր ուսումնասիրուեցաւ, հողագործութեան, հանքերի և անտառներու նախարար Սէլիմ Մէլհամէ էֆէնտին (որ Հալէպի մի քրիստոնեայ է, Օսմանեան Հանրային պարտքի նախկին տեսուչ) հրաման ստացաւ նախապատրաստական աշխատութիւնները կատարելու։ Սէլիմ Մէլհամէ, որ շատ ընդունակ մի մարդ է, եռանդով առաջ տարաւ գործը, Արուեստահանդէսի տեղը որոշուեցաւ, մի յանձնաժողով կազմուեցաւ և մինչեւ անգամ մի խօսափողի երկրաչափի յանձնարարուեցաւ որ Արուեստահանդէսի շէնքերը չինէ. առժամանակայ մի քէօշք ալ չինուեցաւ։

Այդ արուեստահանդէսի ծախքերուն համար պէտք եղած դրամները հայթայթելու նպատակով՝ 10 փարայի (5 ½ սանթիմ) մի տուրք ալ դրուեցաւ Կ. պօլսի մէջ չոգեկառքերի և չոգենաւերի ամէն կարգի տոմսակներուն վրայ։ Եթէ հաշուի առնենք որ ամառ ժամանակ 100,000ի չափ բնակիչ և ձմեռն ալ անոր կէսը կերթեւեկեն Կ. պօլսի շրջակայներէն — Պակիւտար, Գատիգիւղ, Վօսփոր, Կղզիներ, Մ՚ազբկիւղ, Սան. Ստեֆանօ և այլն, — պիտի տեսնուի որ օրական 4000 ֆրանգ եկամուտ կը գոյանայ այդ տուրքէ։ Արուեստահանդէսի խնդիրը մէկտեղ եղնելէն ի վեր կանոնաւորապէս կառնուի, թէեւ շատ տեղերի համար չոգենաւ կամ չոգեկառք նստելու ծախքին վրայ %ին 25 մի յաւելում եղած է այդ տուրքով։

Եւ ահա մի օր, լռութիւնը տիրեց Արուեստահանդէսին վրայ. բացարձակ լռութիւն։ Յանձնաժողովը ա՛լ չգումարուեցաւ և կենթադրեմ թէ լրագիրներուն ալ հրաման տրուեցաւ որ աւոր վրայ բան չգրեն։ Սուլթանին այնպէս հասկցուցեր էին որ եթէ Կ. պօլսի մէջ Արուեստահանդէս բացուի, ամեն կողմէ օտարականներ և Թիւրքիացիներ կուգան կը լեցուին մայրաքաղաքը և յեղափոխական դաւադիրներն այդ բազմութեան մէջ դիւրաւ կրնան առաջ տանիլ իրենց չար ծրագիրները։

Ուրիշն այդ Արուեստահանդէսէ յիշատակ կը մնայ մեզ Կ. Պօլսի մէջ շոգեկառքի և չոգենաւի տոմսակներուն վրայ դրուած տուրքը միայն. բայց հաւանօրէն մի յաւիտենական յիշատակ կը լինի այդ։

ՀՈՂԱԳՈՐԾՆԵՐԻ ԵՒ ԳԻՆԵԳՈՐԾՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ ԹԻՒՐՔԻԱՅԻ ՄԷՋ

Առաջիկայ ձմեռը չատ տխուր պիտի լինի Թիւրքիայի հողագործ ժողովուրդներուն համար։

Այդ դժբաղդ հողագործներ՝ որոնք հարկերի ծանրութեանը տակ ճմլուած և վաշխառուներէ ձեռքերնին արիւնաքամ եղած են, թէեւ չափազանց խնայողութեամբ կապրին, բայց հազիւ ապրելու չափ բան կունենան։ Այս տարի մանաւանդ իրենց վիճակ չատ դէշցած է։ Հունձքերն ընդհանրապէս չատ առատ եղած չեն. իսկ այն քիչն ալ որ ստացած են, չատ վար գնով կը ծախուի. մանաւանդ արմտիքը որ Թիւրքիոյ հարստութեան գլխաւոր աղբիւրն է։ Աղտոր տեսակ կարծր ցորենի փիլէն 15 ղրուշ (քառասուն լիտրը 3 ֆր. 15 սնթմ.) հազիւ կը ծախուի։

Մարմարայի ծովեղերքի բլրակները այդիներով ծածկուած են։ Քանի որ Ֆրանսա իր որթատունկերի ջնասուելուն պատճառով ստիպուած էր Թիւրքիայէն գինի գնել, այս տեղերի գինիները բարձր գնով կը ծախուէին և բոլոր այս այգեպետ գիւղերի բնակիչները լաւ կեանք կը վարէին. բայց այժմ որ Ֆրանսա օտար երկիրներէ գինիներին կարօտ ծնացած չէ, այս տեղի գինիներն ալ չեն ծախուիր կամ շատ չնչին գնով կը ծախուին։

Իսկ Թիւրք կառավարութիւն ի՞նչ կանէ այդ գինեգործներուն լինցած վիճակին օգնելու համար. — Քառասպտիկ տուրք կառնէ անոնցմէ։ Այդ գինեգործներէ տուրք կառնեն այժմ դարձեալ, այն հաշուով լինչ հաշուով որ կատանային նախկին բարգաւաճ և երջանիկ տարիները, մինչդեռ այն ատեն հիմակուանէն չորս անգամ աւելի բարձր գնով կը ծախուէր գինին։

Թիւրքիացի այգեգործը կը վճարէ

Ա. Հողին համար կալուածական տուրք.

Բ. Թաղողին համար հարիւրին 12 տասանորդ (օրէնքով այդչափ է, բայց իրօք միշտ աւելի կառնեն).

Գ. Գինիին համար Օսմանեան Հանրային պարտքին վճարուելիք տուրք որ է գինիի արժէքին հարիւրին 15ը (գինիին գինը բուն գնէն 3 անգամ, 4 անգամ աւելի կարժեցուցնեն և տուրքն ալ այդ հաշուով կառնեն).

Դ. Մաքսային տուրք, գինիի արժէքին վրայ հարիւրին 8 հաշուելով, եթէ մի նաւահանգիստէ Թիւրքիոյ ուրիշ մի նաւահանգիստ փոխադրուի (գինիին արժէքը կը հաշուեն այն գնով որով արդէն հաշուած և իրեն վերաբերեալ տուրքն առած է Հանրային Պարտքի վարչութիւնը. այսինքն բուն գնէն 3-4 անգամ աւելի)։

Ե. Մի ուրիշ տուրք ալ, եթէ գինին ղտուի։

Այս բոլոր տուրքեր վճարուելէն յետոյ, եթէ գինին ծախուի և մի բան աւելնայ, այդ պիտի մնայ գինեգործին...։

Գործէն տեղեակ չեղողները դուժէ չհատատան թէ Թիւրքիոյ մէջ կառավարութիւնն այսատիճան իրեն կը սեփականէ հողագործ ժողովրդի ճակտի քրտինքին արդիւնքները. բայց այս գրուածներ յայտնի և անհերքելի ճշմարտութիւններեն։

ԾԱՂԻԿ ԳԻՒՂԵՐ

Հետեւեալ գիրքերը կարելի է ըսանալ Արմենիոյ խմբագրատունէն իրենց առջեւ նշանակուած գիներով որոնց մէջ հաշուուած է և ղրկելու փոստի ծախքը։

Արժէքը կանխիկ չվճարուած՝ գիրք չ ղրկուիր։

Բ. Յ. Վարդանկեանց. ԴՈՒՇԱՆԻԿ Դրուագ Ա. (Հեղինակին յատուկ ոճն եղող ճարտար բանահիւսութեամբ և գրաբար լեզուով գրուած ոտանաւորներ են Աստուծոյ արարչագործութեան հրաշալիքներն պատմող)։ Գին է 75 սանթիմ։

Խօսք վասն Հայրենասիրութեան Բ տպագրութիւն 60 սնթմ.։

Վ. Փափազեանց—Պատկերներ Թիւրքահայերի կեանքից (Հեղինակին 11 հատ նարնտիր վէպիկները)։

4 ֆրանք։

Հ. Կղեմէս Վ. Սիպիլեան, Դասատորութիւն Ռուբիանեան դրամոց (Մէկ լուսանկարատիպ պատկերով, վեց վիմատիպ տախտակօք — 79 պատկեր --, և 53 պատկերօք ի բնագրին, որոց մէջ կան բազմաթիւ չհրատարակեալներ։ Մեծ 8° երես ԺԶ+88+32). վիէննա 1892։ Գին 7 ֆրանք։

Հայկակ Լիկինեան, Կակաւանք ցեղը Ա, Ն. Երիք. 1890 (Հեղինակին ընտիր մէկ բանաստեղծութիւնն է այս արձակ գրուած)։ 30 սնթմ.

Գիւտ Քահանայ Աղանեանց, Դիւան Հայոց պատմութեան. Գիրք Ա. Բ. 1780-1834. Տպագր. Թիֆլիզ. 1893 (Հայոց ազգի 54 տարու պատմութիւնը կը ներկայացունէ, մանաւանդ էջմիածնի գլխէն անցածները, պատմական վաւերաթուղթերով։ Սկիզբը գրուած է կարբեցի Յովհաննէս կաթողիկոսի պատկերը։ Այս աշխատութիւն արժանացած է Նահակ-Մեսրոպեան մրցանակին)։ 7 ֆր.

Կոստանդին Ապրիկեան, Հայրենիքէն դուրս։ Վէպիկ. Հրատարակութիւն Մ. Թարվերդեանի (Մեծագոյն բաղդ յոյսերով հայրենիքէն դուրս եկած մի հարուստ գիւղացու

պատահած թշուառութիւնները կը նկարագրէ որ հազիւ իր հայրենիք վերադառնալով հոն կրցած է գտնել իր հանգստութիւն)։ 50 մնթմ.

Հ. Բարսեղ Մարգիսեան, Ուսում տնօրէնութիւն Մանիքեան Պաւղիկեան Թոռրակեցիներու աղանդին և Դր. Նարեկացու Թուղթը (կրօնական նորելուկ դաղափարներէ տարածման պատճառով Հայաստանեայց ժողովրդին մէջ ծագած երկարատեւ և մեծ յուզումներէ մի առանձին ուսումնասիրութիւն է որի մասին գրուած չկայ Հայոց պատմութեան դասագիրքերին մէջ)։

2 ֆր. 20 սնթմ.։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԺԹ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

ՄԻ ՊՈՒԼԿԱՐ ՀԱՅՐԵՆԱՍԷՐ
(ՋԱՔԱՐԻԱ ՍԹՈՑԱՆՈՎ)

ՖՐԱՆՍԵՐԷՆԷ ԹԱՐԳՄԱՆԵՑ
ՄԱՐՏԻՐՈՍ ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

1894

Պուլկարիան անկախութեան հերոսներէ մէկին, Ջաքարիա Սթոյանովի, որ իր ընդունակութեան և հայրենասիրական ոգեւորութեան շնորհով յաջողեցաւ մի լեռնաբնակ գիւղացի հովուի պարզ վիճակէն հետզհետէ արհեստաւոր, վարժապետ, յեղափոխական գործիչ, խմբագրապետ և վերջապէս ազատ Պուլկարիոյ Ազգային ժողովին նախագահ դառնալ, խիստ հետաքրքրաշարժ կենսագրութիւն է, ուր ուշադրութեան արժանի տեղեկութիւններ կան նաեւ Պուլկարիոյ թիւրքի լուծէն ազատելու աշխատող պուլկար հայրենասէր յեղափոխականներու գործունէութեանը մասին։ Սկիզբը գրուած է նաեւ հեղինակին, Բրօֆէսէօր Լուի Լէժէի, և թարգմանչին միջեւ եղած թղթակցութիւնը այս գրքի հայերէն թարգմանութեանն առթով։

Հեղինակը շատ իրաւամբ կը գրէ իր յառաջաբանի վերջ թէ «Զարմանք պիտի պատճառէ ինձ եթէ ընթերցողներէ հետաքրքրութիւնը չգրաւի պետական մարդ դարձած մի գիւղացու այս վաւերական պատմութեան վրայ։»

Գինն է փոստի ծախքով մէկտեղ 1 ֆրանգ և 40 սանթիմ։

Տարածելու համար մեծ քանակութեամբ առնողներուն 25 % զեղչ կը վճարի։

(Պարսկաստանի Հայերուն համար 1 ֆրանգ է։)

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ Է ՀԱՅՑ ԼՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՐԻՒՐԱՄԵԱՅ (1794–1894) ՅՈՒԲԵԼԻՆԻ ՊԱՏԿԵՐԸ

Այս պատկերը որ «Հանդէս Ամսօրեայ»ի խմբագրութիւնը հրատարակած է ներկայ 1894 թուականի Հայ ազգին մէջ լրագրի սկզբնաւորութեան դարադարձը լինելուն առթով, մեծ միաձոյլ դիրքով է լուսատիպ (phototypique), որի մեծութիւնն է 50 × 35 սանտիմետր, տպուած 70 × 45 սանտիմետր քարտոնի (carton) վրայ այլ և այլ բնագրով։ Մէջ տեղը դրուած է Հայ լրագրութեան հիմնադրին՝ Ս. Յարութիւն Քհնյ. Շմաւոնեանի պատկերը, և բոլորտիքը՝ 1894ին հայերէն լեզուով հրատարակուող բոլոր լրագիրներուը իրենց խմբագրապետներու պատկերներով։

Գինն է 1 բրլ. 50 կպկ. կամ 4 ֆրանգ, ճանապարհածախսով միասին։ Պարսկաստանի համար 1 ղրշ. ռսկն. կամ 2 ֆր. եւ 50 սնթմ.

Սոյն առթիւ կը յայտնենք որ լոյս տեսած է նաեւ

Գալէմքեարեան Հ. Գ., Պատմութիւն հայ լրագրութեան ի սկզբանէ մինչեւ մեր ժամանակը։ Հար. Ա. 1794. 1860. մէկ լուսատիպ պատկերով։ Վիէննա Մխիթարեան տպարան 1893։ Գինն՝ ճանապարհածախսով՝ բրլ. 1 կամ 2 ֆր. և 50 սանթիմ։

Վերոգրեալ պատկերն ու դիրքը ստանալու համար, դիմել Վիէննա Մխիթարեան Պատուարժան Միաբանութեան որ հրատարակած է զանոնք։

Կարելի է նաեւ ստանալ զանոնք, դիմելով Արմենիոյ խմբագրութեան։

ՀԱՑՈՑ ՀԱՅԲԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ
Ա ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ



Բ. Տպագրութիւն

«Հայոց Հայրենասիրական Միութեան» հրատարակած այս վարպետարանի մէջ համառօտ կերպով բացատրուած է թէ իւրաքանչիւր հայրենասէր Հայ ի՛նչ փափաքներ պէտք է ունենայ և ի՛նչ պարտքեր ունի կատարելու։

Կը խնդրուի ամեն հայրենասէր Հայերէ իրենց չրջանի մէջ տարածել այս տետրակ։ Մէկ անգամէն 50 օրինակ ծախու առնողին կը զրկուի 5 ֆրանգով Հասին գինն է 15 սանթիմ (Պարսկաստանի Հայերուն համար 10 սանթիմ)։

Ինչպէս ամեն լրագիրներ, Արմենիան ալ կընդունի ծանուցումներ հրատարակելու համար. անոնք որ պէտք կունենան Արմենիոյ միջոցով մէկի դիմումը անել կամ մի բան յայտարարել, պարտաւորին ընդունելիրենց ծանուցումներ ըստ, լրագրական սովորութեան։ Ծանուցումների գիները նշանակուած են Արմենիոյ ճակատը, տառին վրայ հաշուելով. 1 երկթագրի (գլխագիր) համար 2 սանթիմ և 1 բոլորգրի համար 1 սանթիմ։ 3 անգամ դրուելիք ծանուցումի գինին վրայ 0/0ին 10 զեղչ կը լինի. 10 և աւելի անգամներ դրուելիք ծանուցումի գնի վրայ 0/0ին 30 զեղչ։ Սակարկութիւն չընդունուիր։

Նշանակք Հայաստանեայց. Մայր Հայաստանի պատկերը՝ Հայոց 4 թագաւորութիւնների նշանակներովը մէկտեղ վայլուն թղթի վրայ և կանաչ, կապոյտ և դեղին գոյներով ներկուած, 1 ֆրանգ։

ԼՈՒՍԻՆԵԱՆ ՍԲԲԱԶԱՆԻ ՊԱՏԿԵՐԸ

Տաճկական բանութեան նահատակ եղող Խորէն Նարպէյ-Լուսինեան Սբբազանի պատկերը ընտիր թղթի վրայ տպուած կը ծախուի Արմենիոյ խմբագրատունը։ Գինն է 65 սանթիմ, փոստի ծախքը խմբագրատունէն վճարուելով։

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Մ. Փորթուգալեանի հրատարակած դիրքերին վրայ մանաւոր զեղչ կը լինի Պարսկաստանի Հայերին համար որոնց կը ղրկուի փակագծի մէջ նշանակուած գիներովը։

Ա. ՀԱՑ ԴԻՒՑԱԶՆՈՒՀԻ ՄԸ (Սպառած)։
Բ. ՀԱՑ ԳԻՒՂԱՑԻ »
Գ. ՍԱՂՄՈՍ ԻՍՐԱՑԵԼԻ »
Դ. ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՊՈՒԼՂԱՐԻՈՑ ԵՒ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ ՊՈՒԼՂԱՐ ԱՊՍՏԱՄԲԱՊԵՏԱՑ (Սպառած)

Ե. ՀԱՑԱՍՏԱՆԻ ԹՇՈՒԱՌՆԵՐԸ.—(Հայաստանեցիներուն պանդխտութեան տխուր հետեւանքներուն մէկ փոքրիկ պատկերը կը ներկայացունէ վիպական կերպով։) Գինն (90 սնթմ.) 1 ֆրանգ 20 սնթմ.

Զ. ԳԱՄԱՌ ՔՈՐԻԳԱ — ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ յետ այբուբենաց առարուեստից (Մեծանուն հայ բանաստեղծին վերջերս գրած ապառաչունչ ընտիր ոտանաւորներէն 3ը՝ առանձին տետրակով հրատարակուած են)։ 50 հատը 2 ֆր. և 50 սանթիմ, հատը (5 սնթմ.) 10 սանթիմ։

Է. ԼԻՆԶԻ ՕՐԻՆԴԸ ՏԱՃԿԱՀԱՑԱՑԱՏԱՆՈՒՄ. (Սպառած)

Ը. ՓԻՒՐՓԻԱՅ ՀԱՑԵՐՆ ԵՒ ԻՐԵՆՑ ԴՐԱՑԻՆԵՐ (Թիւրքիոյ Հայերին և իրենց դրացի ազգերի վրայ վիճակագրական և ցեղաբանական ամփոփ և հետաքրքրաշարժ տեղեկութիւններ կը պարունակէ։ Թիւրքահպատակութեան մէջ բնակող այլ և այլ ազգերէ բնակիչներէ թուին բազդատական մէկ ցուցակն ալ կցուած է տետրակին վերջը։) Գինն 50 սանթիմ (35 սանթիմ)։

Ք. «ԱՐՄԷՆԻԱ»Ի ՑՈՒՇԱՐԱՐ (Արմենիոյ Ա տարեշրջանի Թիւերը այժմ բոլորովին սպառած և միեւնոյն ժամանակ շատերի հետաքրքրութեան առարկայ դարձած լինելով, այդ չրջանի մէջ Մ. Փորթուգալեանի գրած ստացողորդոց յօդուածներէն դէթ 30ի չափ ամփոփուած են Ցուցադարանի մէջ որ ութ ածած դիրքով 124 երեսներէ կը բաղկանայ)։ (1 ֆրանգ)։ 1 ֆր. 40 սանթիմ

Ը. ՎՐԷԺ (Պուլկարիոյ մէջ Թիւրքերի տրած բարբարոսութիւններէն մի փոքրիկ պատկեր կը ներկայացունէ և ցոյց կուտայ թէ Պուլկարներն ի՛նչպիսի մի չոգիների դիմած են իրենց վրէժ լուծելու համար)։ (15 սնթմ.) 20 սնթմ.

Ը.Ա. ԹՈՄԱԿ ՑՈՑԱՐԻՍ (Ցուլիոսի մէջ Թիւրքերի տրած բարբարոսութիւններէն մի փոքրիկ պատկեր կը ներկայացունէ և ցոյց կուտայ թէ Ցոյներն ի՛նչպիսի միջոցների դիմած են իրենց վրէժ լուծելու համար)։ (0,15 սանթիմ) 20 սանթիմ։

ԺԲ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

ՆՄՈՑՇՆԵՐ
Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ ԳՐԱԾ ՈՏԱՆԱՒՈՐՆԵՐԷՆ

Մ. Փորթուգալեանի գրած հարիւնաթիական ոտանաւորներէ մի քանին ամփոփուած են այս տետրակի մէջ իրենց նմոյշներ զանազան քաղաքներու մէջ և զանազան տպաւորութիւնները տակիտ երթեւեկ գրած ոտանաւորներէն որոնք ժամանակին հրատարակուած չլինելով կորսուած են այժմ։ Այն մի քանի ոտանաւորներ որոնք իրենց նմոյշ ամփոփուած են այս տետրակի մէջ, յիր և ցան կը գտնուին Կ. Պոլիս տպագրուած ազգային երգարաններուն մէջ՝ որոց վերատին տպագրութիւնն վաղուց արդէն արդիլուած է, և Ասիա և Արմենիա լրագիրներուն մէջ։ Նմոյշներու մէջ փոքրիկ տեղեկութիւններ տրուած են նաեւ թէ այդ ոտանաւորները ի՛նչ տպաւորութիւններու տակ ներշնչուելով գրուած են։ Գին (10 սանթիմ) 15 սանթիմ։

ԻՄ ՀԱՅՐԱՍՊԱՆ ԸՆԿԵՐԸ

(Կ. ՊՕԼՍՈՑ ՀԱՅՈՑ ԿԵԱՆՔԷՆ Ա ԻՆՈՒԱԾ ՄԻ ԻՐԱԿԱՆ ՎԻՊ)

ԳՐԵՑ ԱՊԼՂԱՐԻՊ

Այս հետաքրքրաշարժ գրուած կը ներկայացունէ ընտանեկան տխուր պատկերներէ մին ուր կը տեսնուի թէ անբարոյական մի հայր իւր ապականուած վարքուբարքով որչա՛փ չարիքներու պատճառ դարձած է և վերջէ ի վերջոյ ինչ ալ իւր որդու ձեռքով սպանուած և անհետացած է աշխարհէ։ Գին 1 ֆրանգ, (75 սանթիմ)։

ՏՆՕՐԷՆ—ԽՄԲԱԳԻՐ
Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Le Gérant : François CARRIÈRE
ՄԱՐՍԷՑԼ
Հայերէն տպարան Մ. Փորթուգալեանի
Marseille. — Imprimerie et Papeterie du Midi, Allées de Meilhan, 44.